աղջկանց յեկեղեցւոջ զերգս գովութեան իւրոյ յաւուր տօնի Զատկին։ Պատուական համարէր զվերակացութիւն հարկաց քան զպատիւ եպիսկոպոսութեան իւրոյ։ Ուսուցանէր թէ՝ Յիսուս ընկալաւ զրանն, այսինքն զզօրութիւնն Աստուծոյ (որ բնակեաց 'ի նմա, սկիզբն արարեալ 'ի յղութենէ մինչեւ ցչարչարանսն)։ Ժողովք երեք եպիսկոպոսաց դումարեցան յԱնտիոք, յերկուս առաջին ժողովսն, (264) որ եղեն առաջնորդութեամբ Փիրմիլիանոսի եպիսկոպոսին Կեսարու Կապադովկացւոյ՝ պատրեաց զհարս պատ 'ի պատ բանիւք և սուտ զղջմամբ, այլ յերրորդումն (269), որում առաջնորդէր Հեղինոս եպիսկոպոս Տարսոնի, կոչեցաւ և Դիոնիսիոս եպիսկոպոս Աղեքսանդրիայ։ այլ նա վասն ծերութեան իւրոյ գրով յայտնեաց զդաւանութիւն հաւատոյ՝ զոր ունէր։ գտաւ 'ի ժողովի աստ ընդ այլսն և Հիմէնոս եպիսկոպոս Երուսաղէմի, եւ այլ երիցունք և Սարկաւագունք։ Մաղքիոն երէց Եկեղեցւոյն Անտիոքայ, վարժ հելլենական դպրութեան եւ հըմուտ աստուածային գրոց, խայտառակեաց զնա յաւուրսն։ ընկեցաւ Պօղոս յԱթոռոյն, և հարքն՝ սիւնհոդոսական թղթով (առ Եւսեբեայ) ծանուցին զանցսն համօրէն կաթուղիկէ եկեղեցւոյ։ Բայց Պօղոս ոչ մեկնեցաւ 'ի բաց յԱթոռոյն՝ պաշտպանութեամբ Զենոբիայ դշխոյին Պալմիրացւոց, որում սիրելի իսկ էր։ այլ իբրեւ ըմբռնեցաւ Թագուհին յԱւրելիանեայ (272)։ արտաքսեցաւ եւ Պօղոս անարգանօք 'ի ձեռն աշխարհական իշխանութեան յեպիսկոպոսարանէ անտի։

Իսկ եպիսկոպոսն Երուսաղէմի Հիմենոս վարեալ խաղաղութեամբ զիշխանութիւն իւր վախճանեցաւ, և զկնի նորա կալաւ զաթոռն Զարթաս, և ապա Հերմոն, մինչեւ 'ի ժամանակս Հալածանաց։ Սա առաքեաց զԵփրեմ եպիսկոպոս 'ի Թուրքաստան, և զՎասիլիոս եպիսկոպոս 'ի Բերոսոն, այն է Խրիմ, վասն քարոզութեան։ իբրեւ նահատակեցին Բերսոնացիք զՎասիլ, առաքեաց Հերմոն զաշակերտ իւր Աթիրիոս եպիսկոպոս, զայր սուրբ և առաքինի։ իբրեւ ոչ ընկալան զնա Բերսոնացիք՝ ձեռնտուութեամբ Կոստանդիանոսի հան անտի զմնացեալ անհաւատս եւ բնակեցոյց զքրիստոնեայս և չինեաց զեկեղեցիս, և 'ի